

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015թ-ի դեկտեմբերի 27 -ին ժամը 13:00 -ին Արարատի մարզի Վ. Դվին համայնքում տեղի ունեցավ 2015 թ-ի երկրորդ կիսամյակի վերաբերյալ հանրային լսում , որը վարում եր համայնքի ղեկավար՝ Լյուդմիլա Պետրովան , արձանագրում եր աշխատակազմի քարտուղար՝ Մ. Տամրազովան:

Լսումներին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակազմը, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցները,ավագանին և բնակչությունը:

Լսեցին համայնքում կատարված հետևյալ աշխատանքների մասին:

. Հիմք ընդունելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը և բյուջեի հնարավորությունները , ինչպես նաև ելնելով բնակչության սոցիալ – կենցաղային վիճակի բարելավումից ու պահանջից համայնքի բյուջեի միջոցներով զագաֆիկացվել է երեք փողոց , ծախսելով 7560,0 հ. դրամ :

Խճապատվել է դեպի եկեղեցի տանող ճանապարհը ,ընդամենը – 1449,3 հ.դրամ:

Կատարվել է համայնքային գերեզմանոցի ցանկապատումը բյուջեի միջոցներով – 6150,0 հ.դրամ:

Համայնքում կազմակերպված կատարվել է աղբահանությունը:

Բնակիչների խնդրանքով գյուղ. մասնագետի կողմից կատարվել է հողամասերի չափագրում:

Սոցիալապես անապահով 180 ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Բնակչությանը տրամադրվել է 193 տողեկանք:

Դրամական օգնություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքներին 2560,0 հազար դրամի չափով :

Մահվան կապակցությամբ հանգուցյալների ընտանիքներին դրամական

օգնություն է ցուցաբերվել 460.0 հազար դրամի չափով:

Հո.ի հարկ է հավազագրվել 6246,9 հ. դրամ :

Գույքահարկ է հավազագրվել 1232.2 հ. դրամ :

Մեպտեմբերի 1-ի կապակցությամբ առաջին դասարանի երեխաներին գյուղապետարանի կողմից տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ:

Սուրբ Ծննդյան և Ամանորի տոների կապակցությամբ գյուղապետարանի կողմից համայնքի նորապսակներին և ուսանողներին տրամադրվել են նվերներ:

Տարական դասարանների երեխաների համար կազմակերպվել է Ամանորյա միջոցառում և տրամադրվել են նվերներ:

Ամանորի և սուրբ ծննդյան տոների առթիվ համայնքի սոցիալապես անապահով , հաշմանդամ, բազմազավակ և ծնողազուրկ երեխաների ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն:



Լ. Պետրովա